ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ   РЕЦЕНЗИИ

Գ. Ա. ԲՐՈՒՏՅԱՆ. Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին. *Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1980, 212 էջ։*

Ներկայացվող աշխատությունն աչքի է ընկնում հարցադրումների նորությամբ և գիտական խորությամբ։ Նրանում կարևոր նշանակություն է տրվում այն բանին, որ Դավիթ Անհաղթի մոտ տրամաբանության առարկայի հարցը քննարկվում է փիլիսոփայության և տրամաբանության փոխհարաբերության խնդրի տեսանկյունից։ Չհամաձայնելով անտիկ աշխարհում հայտնված այն կարծիքին, որ տրամաբանությունը փիլիսոփայության կամ մասն է, կամ գործիքը, Դավիթ Անհաղթը հիմնավորում է այն տեսակետը, որ տրամաբանությունը չի կարելի տարանջատել փիլիսոփայությունից, որի և՛ մասն է, և՛ գործիքը։ Նա պարզաբանում է նաև, թե ինչ հանգամանքներում է տրամաբանությունը հանդես գալիս որպես փիլիսոփայության մաս և երբ՝ որպես գործիք։ Ծառայելով առարկաների գոյության հետազոտությանը, տրամաբանությունը իրեն դրսևորում է որպես փիլիսոփայության մաս, իսկ երբ հետազոտողին տրվում է մտածողության կանոնների համակցությունը, այն փիլիսոփայության գործիքն է. «քանզի բնութիւն իրողութեանց գոյ ապացոյց՝ մասն է իմաստասիրութեան, իսկ ի կիտակսն՝ գործի»[1], ճշմարիտն ու սխալը, չարն ու բարին միմյանցից տարբերելու համար տրամաբանությունը փիլիսոփայական հետազոտություններում նույն ֆունկցիան է կատարում, ինչ լարը հյուսնի գործում. «քանզի զոր ինչ պէտս կատարէ հիւսան լարն հիւսան՝ որոշելով զզորդն եւ ոգելն, եւ շինողին բստակն՝ որոշելով զթեւրն և զուղղորդն՝ այսպէս եւ բանականն՝ գործի գոլով իմաստասիրութեան՝ որոշէ ի միմեանց զսուտն եւ զճշմարիտն, զչարն եւ զբարին, զի մի սուտ կարծեսցուք և մի չար ինչ գործեսցուք»։

Աշխատության հեղինակ, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Ա. Բրուտյանը ընդգծում է, որ ըստ Դավիթ Անհաղթի գիտելիքի բոլոր ձևերը անհրաժեշտաբար դիմում են բաժանմանը և սահմանմանը, իսկ այդ հնարների մայրերի մայրը փիլիսոփայությունն է։ «Դարձեալ պարտ է ասել,— գրել է Դավիթը,— թէ վասն այնորիկ ասաց զիմաստասիրութիւն արհեստ արհեստից և մակացութիւն մակացութեանց, վասն զի ամենայն բանաւոր արհեստք պէտս ունին բաժանմանց և սահմանաց և ապացուցից, որոց սայր ի սայր իմաստասիրութիւնն ծանաչի»[2]։

Նորովի է մեկնաբանում Գ. Բրուտյանը մտահանգման տեսության վերաբերյալ Դավիթ Անհաղթի հայացքները, ցույց է տալիս, թե գիտական առումով ինչ հետաքրքրություն են ներկայացնում անցյալի հայ մտածողի կողմից սիլլոգիզմի ճանաչողական նշանակության բացահայտումը, սիլլոգիզմի նախադրյալների բնույթի հարցի քննարկումը, դրանց կառուցվածքային տարրերի՝ սիլլոգիզմի տերմինների բնութագրումը, սիլլոգիզմի դեմ սկեպտիկական կողմնորոշման ներկայացուցիչներ էֆեկտիկոսների փաստարկների հերքումը, սիլլոգիզմի արիստոտելյան սահմանման մեկնաբանումը։ Վերոհիշյալը նախադրյալ է այն օրինաչափ եզրահանգման համար, որ կատարում է Գ. Բրուտյանը, գտնելով, որ Արիստոտելի «Առաջին Անալիտիկայի» համապատասխան հատվածների բառ առ բառ վերլուծությունը V—VI դդ. հայ տրամաբանի կողմից, անշուշտ, կարող է օգնել տրամաբանության պատմության իրական ընթացքի գիտական վերաիմաստավորմանը (էջ 120)։ Նա այդ միտքը հիմնավորում է համա-

---

[1] *Դաւիթ Անյաղթ. Մեկնութիւն ի «Վերլուծականն» Արիստոտելի. Համառօտ քննական բնագիրը, թարգմանությունը գրաբարից ռուսերեն, առաջաբանն ու ծանոթագրությունները՝ Ս. Ս. Արևշատյանի. Երևան, 1967, էջ 64.*

[2] *«Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտելի» ի լոյս էած Յ. Մանանդեան. Ս.-Պետերբուրգ, 1911, էջ 14։*

կապես ժամանակակից նշանավոր լեհ տրամաբան Լուկասևիչի կողմից բարձրացված՝ արիստոտելյան և ավանդական սիլլոգիզմների տարբերության հարցի կապակցությամբ։

Դավիթ Անհաղթի ուսմունքը սահմանման մասին այսօր էլ պահպանել է իր թարմությունը։ Գ. Բրուտյանը դիտական բարեխղճությամբ և գիտական բարձր մակարդակով քննարկում է սահմանման կանոնների մեկնությունները «Սահմանք իմաստասիրութեան» երկում։ Հատկապես ուշագրավ է ժխտական սահմանումների վերաբերյալ Դավիթ Անհաղթի տեսակետի պարզաբանումը։ Ցույց է տրվում, որ Դավիթ Անհաղթը իր ժամանակին ոչ միայն խոսել է ժխտական սահմանումների կիրառության հնարավորության մասին, այլև ճշգրտորեն նշել է նման հնարավորություններից մեկի՝ կոնկրետ պայմանը. եթե տվյալ բազմության բոլոր տարրերը, մեկից բացի, սահմանված են, ապա այդ մնացած վերջին տարրին կարելի է տալ ժխտական սահմանում, նշելով, որ այն օժտված չէ բազմության մեջ մտնող մյուս բոլոր տարրերին բնորոշ հատկություններով (էջ 52)։

Ցուրաքանչյուր ընթերցող, ուշադիր ծանոթանալով Դավիթ Անհաղթի տրամաբանական ժառանգությանը, չի կարող չհամաձայնել պրոֆ. Գ. Բրուտյանի այն կարևոր դիտողության հետ, որ Դավիթ Անհաղթը իր հետազոտություններում հետևողականորեն ղեկավարվել է փաստարկելու սկզբունքով, երբեք չի բավարարվել հայտարարություններով քննարկվող հարցի շուրջը, մշտապես ձգտել է ամեն մի սեփական պնդում ապացուցել և, միաժամանակ, հերքել հակասող դրույթի օգտին բերվող բոլոր հնարավոր փաստարկները։

Այդ սկզբունքի կիրառման փայլուն օրինակներից մեկը փիլիսոփայության սահմանման հարցի վերլուծությունն է Դավիթ Անհաղթի աշխատությունում։ Համադրելով «Սահմանք իմաստասիրութեան» երկի ամփոփ արդյունքը Արիստոտելի այն հայտնի կարծիքի հետ, թե յուրաքանչյուր հասկացության պետք է տալ միայն մեկ սահմանում (քանի որ սահմանումը բացահայտում է ուսումնասիրվող առարկայի էությունը, իսկ վերջինս մեկն է), Գ. Բրուտյանը ապացուցում է, որ հայ տրամաբանի կոնցեպցիան զգալի քայլ է սահմանման գիտական տեսություն ստեղծելու ճանապարհին։ Այստեղ տեղին է հիշատակել Վ. Ի. Լենինի այն դրույթը, թե առարկան իսկապես ճանաչելու համար պետք է ընդգրկել, ուսումնասիրել նրա բոլոր կողմերը, բոլոր կապերն ու միջնորդավորումները։ Բացահայտելով կապը փիլիսոփայության վեց սահմանումների միջև և ապացուցելով նրանցից ամեն մեկի անհրաժեշտությունը, հայ մտածողը գրսևորել է խորը դիալեկտիկական մտածելակերպ (էջ 62)։

Պրոֆ. Գ. Բրուտյանը միաժամանակ հայ մեծ մտածողի գործերը դիտարկում է ժամանակակից գիտնականի հայացքով, բազմաթիվ հարցերի առթիվ կապեր է պարզում Դավիթ Անհաղթի ժառանգության և նորագույն գիտության միջև։ Այսպես, ընթանալով պատմականի և արդիականի կապի հետևողական բացահայտման ուղիով, մենագրությունում վերլուծության են ենթարկվում Դավիթ Անհաղթի հայացքները տրամաբանական շաղկապների բնույթի մասին, մի խնդիր, որ կարևոր նշանակություն է ձեռք բերել ժամանակակից մաթեմատիկական տրամաբանության մեջ։ Հետաքրքրության են արժանի նրա դիտողությունները կոնյունկցիայի տրամաբանական բովանդակության ու հայերենում «և» շաղկապի ձևով նրա դրսևորումների մասին։ Քննարկելով կոնյունկտիվ դատողություն կազմելու հարցերը, Դավիթ Անհաղթը բերում է հետևյալ օրինակը։ Ենթադրենք, մի ինչ-որ Սիմոն լավ մարդ է, բայց վատ կոշկակար։ Կարծես թե «լավ» և «կոշկակար» հատկությունները, որոնք պնդվում են կոնյունկտիվ (միացնող) իմաստով, կարելի է միացնել և կազմել մի դատողություն՝ Սիմոնը լավ կոշկակար է։ Բայց դա սխալ կլիներ, քանի որ հայտնի է Սիմոնի վատ կոշկակար լինելը։ Ելնելով Դավիթ Անհաղթի կողմից հարցի վերլուծությունից՝ Գ. Բրուտյանը եզրակացնում է, որ այն փաստապես պահանջում է դատողությունների բովանդակալից վերլուծում։ Միայն այդ եղանակով կարելի է պարզել, թե որ դեպքում է հնարավոր երկու դատողություն արտահայտել համարժեք կոնյունկտիվ դատողության կրճատ արտահայտությամբ և ընդհակառակը, որ դեպքում դատողությունը կարելի է փաստացի համարժեք համարել երկու պարզ դատողությունների կոնյունկցիային (էջ 95)։

Գրքի հեղինակը ուշագրավ գաղափարներ է հայտնաբերել Դավիթ Անհաղթի մոտ նաև փաստարկման տեսության վերաբերյալ։ Փաստարկման տեսության ժամանակակից ներկայացուցիչները հաճախ են անդրադառնում այն հարցին, թե արդյո՞ք հեղինակությունը նշանակություն ունի փաստարկման պրոցեսում։ Այս կապակցությամբ նա վկայակոչում է Դավիթ Անհաղթի այն կարծիքը, որ հեղինակությանը դիմում են այն դեպքում, երբ ի վիճակի չեն ինքնուրույն ձևով տարբերել ճշմարիտը՝ ստից, պիտանին՝ ոչ պիտանուց. ուստի և հաճույքով դիմում են հեղինակության կարծիքին (էջ 14)։

Աշխատության մեջ վեր է հանվում այն խ-

կապես մեծ արժեք, որ ներկայացնում են Դավիթ Անհաղթի հայացքները հերմենևտիկայի՝ հեղինակավոր տեքստերի մեկնաբանության տեսության համար: Հայ փիլիսոփայի երեք աշխատությունները անմիջականորեն հերմենևտիկական բնույթի են՝ նվիրված Արիստոտելի և Պորփյուրի աշխատությունների վերլուծությանը: Գ. Բրուտյանը հանգում է այն մտքին, որ Դավիթ Անհաղթը հեղինակավոր տեքստերի սոսկ մեկնիչ չէ: Այդ տեքստերի մեկնաբանության կարևորագույն սկզբունքներից մեկը նա համարում է ճշմարտությունը, մեկնաբանվող տեքստերի օբյեկտիվ վերարտադրությունը: Այս կապակցությամբ ուշադրության արժանի է անհավասար աշխատությունների ձևերի և առաջացման պատճառների Դավիթ Անհաղթի վերլուծությունը: Ընդ որում, ընդգծում է Գ. Բրուտյանը, Դավիթ Անհաղթը հետևողականորեն հիմնավորում է իր մոտեցումը, փաստարկներ բերում հօգուտ հետազոտության իր եղանակի, որով և հարստացնում է փաստարկման տեսությունը (էջ 19):

Նկատենք, որ պրոֆ. Գ. Բրուտյանը, Դավիթ Անհաղթի աշխատությունների ձեռագրերի հիման վրա, մի շարք ճշգրտումներ է կատարում անվանի փիլիսոփայի գործերի համահավաք քննական բնագրերի և նրանց թարգմանությունների կապակցությամբ:

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Բրուտյանի հետազոտության մեջ Դավիթ Անհաղթի տրամաբանական ուսմունքը ներկայացված է գիտական լուրջ քննությամբ: Որպես գնահատականները մեկնաբանությունները փաստարկված են: Միաժամանակ մատնանշված են Դավիթ Անհաղթի այն գաղափարները, որոնք առնչվում են ժամանակակից տրամաբանական գիտության պրոբլեմների հետ կամ էական դեր են խաղացել տրամաբանական գիտության զարգացման մեջ: Այս բոլորը հնարավորություն է ընձեռել ճիշտ արժեքավորել Դավիթ Անհաղթի գիտական ժառանգությունը և նշել նրա տեղը փիլիսոփայության պատմության մեջ: Պրոֆ. Գ. Բրուտյանի այս ըստ ամենայնի արժեքավոր աշխատությունը լուրջ ներդրում է հայագիտության մեջ:

Ռ. Ջ. ՋԻՋՅԱՆ

Պ. Ա. ՉՈՒԲԱՆՅԱՆ. Վրացական ուղեգրությունները և նրանց տեղեկությունները հայերի մասին. *ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1981, 199 էջ:*

XVIII դարի առաջին քառորդում սկզբնավորված վրացական ուղեգրական մատենագրությունը ուրույն տեղ է գրավում Անդրկովկասի, Մերձավոր ու Միջին Արևելքի երկրների վերջին հարյուրամյակների պատմության աղբյուրների համակարգում: Սաղելով ու զարգանալով պատմողական աղբյուրների ավանդույթների հիմքի վրա, ուղեգրական երկերը ունեն տարաբնույթ փաստերն ընդհանրացնելու միտում և միաժամանակ գրված լինելով ոչ միայն ականատես, այլ նաև ծավալվող իրադարձություններին անմիջական մասնակցություն բերող գործիչների կողմից, զգալի չափով այլ սկզբնաղբյուրներից անհայտ նյութ են մատուցում հետազոտողներին: Վրացական ուղեգրական հուշարձանները, չնայած ամբողջությամբ հրատարակված լինելու հանգամանքին, մինչև այժմ չէին ենթարկված միասնական ուսումնասիրության, առանց բացահայտվելու էր մնում վրացական ուղեգրական մատենագրության արժեքը Արևելքի երկրների պատմության համար: Չգնահատված էր մնում մասնավորապես այդ հուշարձանների կարևորությունը հայկական գաղթօջախների պատմության, Արևելքի երկրներում հայերի ծավալած գործունեության ուսումնասիրության տեսանկյունից: Գրախոսվող մենագրությունը ոչ միայն լրացնում է կովկասագիտական-արևելագիտական գրականության մեջ վաղուց զգացվող այդ բացը, այլև բազմալեզու սկզբնաղբյուրների քննությամբ լուսաբանում է հարակից այլ խնդիրներ ևս:

Աշխատության հեղինակը առանձին գլուխներ է նվիրել Սուլխան-Սաբա Օրբելիանին, Տիմոթեոս Գաբաշվիլուն, Իոնա Գեդևանիշվիլուն, Ռաֆայել Դանիբեգովի, Գիորգի Ավալիշվիլու երկերի քննությանը: Յուրաքանչյուր ուղեգրական հուշարձանի ուսումնասիրության հեղինակը սկսել է այդ երկը ստեղծողի կյանքի և գործունեության ամփոփ բնութագրումով ու գրական ժառանգության արժեքավորումով: Քաջատեղյակությունը մասնագիտական գրականության և աղբյուրագիտական պատշաճ պատրաստվածությունը հնարավորություն են ընձեռել ամեն մի գլխի ներածական հատվածում մատենագիտական առումով հարուստ տեղեկանքներ ներկայացնել յուրաքանչյուր հեղինակի մասին: Ընթերցողը աշխատության այդ հատվածներից կարող է իրեն հետաքրքրող բազմազան տեղեկություններ քաղել տվյալ ժամանակաշրջանի Վրաստանի պատմության, Անդրկովկասի քաղաքական կացության վերաբերյալ և միաժամանակ ի մի բերված կգտնի արծարծվող խըն-